

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԿՐԻՆ ՔԱՐՏՈՎ ՆԵՐԳԱՂԹԵԼՈՒ ՕՐԷՆՔԸ

Իրաւաբան Յակոբ Թաշճեան

U.S.A. IMMIGRATION GREEN CARD LAW

Միացեալ Նահանգներ ներգաղթելու հիմնական երեք միջոցառումներ կան՝

1. Ընտանիքի երաշխաւորութեամբ

2. Աշխատանքի ճամբով

3. Այլազան միջոցներով, որոնցմէ մէկն է «կրին քարտ»-ի վիճակահանութեամբ, քաղաքական ու կրօնական հալածանքներու պատճառով, եւ այլն:

Ի՞նչ է ընտանիքի անմիջական անդամներու երաշխաւորութեամբ դիմողներու գործընթացը:

1 - Ամերիկեան քաղաքացիներու անմիջական ազգականներ կը նկատուին անոնց կողակիցները «այր թէ կին», ծնողները եւ անոնց 21 տարեկանէն վար եղող ամուրի զաւակները: Ասկէ անկախ, ընտանեկան երաշխաւորութեամբ դիմողներու խումբը կը բաժնուի չորս կարգերու, որոնք «նախընտրութիւններ» կը կոչուին:

«Առաջին նախընտրութեան» դասակարգին մէջ կ'իջնան Ամերիկեան քաղաքացիներու ամուրի չափահաս զաւակները, որոնք 21 տարեկանէն վեր են:

«Երկրորդ նախընտրութեան» դասախումբին կը պատկանին «կրին քարտ» ունեցողներու կողակիցները (այր թէ կին) եւ անոնց 21 տարեկանէն վար եղող ամուրի զաւակները:

«Երրորդ նախընտրութեան» խումբին մէջ կ'իջնան Ամերիկեան Քաղաքացիներու ամուսնացեալ զաւակները (մանչ թէ աղջիկ):

«Չորրորդ նախընտրութեան» դասախումբին մաս կը կազմեն Ամերիկեան քաղաքացիներու ամուսնացեալ եղբայրներն ու քոյրերը: Յայտնենք անմիջապէս, որ վերոյիշեալ չորս «նախընտրութեանց» պարագային՝ կարգի սպասելու հարց կայ:

2 - Աշխատանքի ճամբով դիմողներու գործընթացը: Աշխատանքի ճամբով դիմողներու համար, Օրէնքը հինգ խումբեր ստեղծած է:

Առաջինը, որ կը կոչուի «Առաջնակարգ Գործաւորներու» խումբ, կը վերաբերի բոլոր այն օտարականներուն, որոնց հըմտութեան պէտք ունի Միացեալ Նահանգները: Այս խումբին կը պատկանին իրենց մարզերուն մէջ արտակարգ կարողութիւններով օժտուած եւ հանրաժանօթ անհատներ, բացառիկ դասախօսներ, հետազօտողներ եւ միջազգային մակարդակի վրայ եղող շահարկողներ:

Երկրորդը այն խումբն է, որուն մէջ կ'իջնան բացառիկ իմացակամութեան տէր եղող անհատներ, որոնք առնուազն մագիստրոս եւ կամ դոկտորայի տիտղոսներ ունին, եւ նաև անձեր, որոնք կրնան օգտակար նկատուիլ Միացեալ Նահանգներու համար:

Երրորդ խումբին կը պատկանին հմուտ եւ ոչ-հմուտ գործաւորներ, որոնք պէտք է վաւերական հաստատագրեր ունենան:

Չորրորդը՝ Ծահարկողներու խումբն է, որուն մէջ կ'իջնան Միացեալ Նահանգներու մէջ գործառնութեան ձեռնարկող անձեր, որոնք առնուազն կէս միլիոնէն մինչեւ մէկ միլիոն տոլար պէտք է որ ներմուծեն գործառնութեան սկսելու համար:

Հինգերորդը՝ կրօնական հաստատութեանց մէջ աշխատողներու խումբն է, որուն մէջ կ'իջնան ձեռնադրուած եկեղեցականներ:

3 - Այլազան միջոցներով ներգաղթողներու գործընթացը: Ներգաղթի Օրէնքը հաստատած է նաև մնայուն ծրագիր մը, որուն համաձայն, տարեկան 55,000 անհատներու առիթ կը տրուի վիճակահանութեամբ «Կրին Քարտ»-ի տիրանալու:

Ի՞նչ է Փամանակաւոր Ներգաղթողներու գործընթացը: Վերոյիշեալ բոլոր դասախումբերէն անկախ, կան նաև ժամանակաւոր կերպով Միացեալ Նահանգներ մտնելու ուրիշ դասախումբեր: Ասոնցմէ ամենածանօթներն են H1 եւ L1 ժամանակաւոր աշխատանքի իրաւունք շնորհող վիզաները: Թուենք զանոնք.

H1 վիզան ստանալու համար, ենթական իր մարզին մէջ պարտաւոր է ունենալ առնուազն համալսարանական տիտղոս մը: H1 վիզան, առաւելագոյնը վեց տարուան համար է:

L1 վիզայով, օտար ընկերութիւն մը կրնայ իր գործադիր պաշտօնեաներէն մէկը կամ աւելին Միացեալ Նահանգներ տեղափոխել նոյն ընկերութեան մէջ ծառայելու: Նման պաշտօնեայ մը պէտք է առնուազն մէկ տարուան փորձառութիւն ունեցած ըլլայ մայր ընկերութեան մօտ: L1 վիզայով, առաւելագոյնը եօթը տարի կարելի է մնալ Միացեալ Նահանգներու մէջ:

O եւ **P** վիզաները կը տրուին հանրաժանօթ նուագող, երգող եւ պարող արուեստագէտներու, ինչպէս նաև մարզիկներու, որոնք կը փափաքին ելոյթներ ունենալ Միացեալ Նահանգներու մէջ:

J1 վիզան կը տրուի բոլոր անոնց, որոնք կը փափաքին Միացեալ Նահանգներու մէջ յաւելեալ փորձառութիւն ձեռք ձգել իրենց ունեցած արհեստներուն կամ արուեստներուն մէջ:

E2 վիզան կը տրուի առետրականներու, որոնք Միացեալ Նահանգներու մէջ առետրական շահագործումներու կ'ուզեն ձեռնարկել: